ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի գործընկեր

Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացրած հայտը պարզվեց, որ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- ներկայացված հայտում սխալ է նշվել՝ պատվիրատուի անվանումը, գնման ընթացակարգի ծածկագիրը, չափաբաժինների քանակը,
- հավելված 1-ում /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն/ բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը,
- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող հավելված 1.2-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև/:
- Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը թերի է՝ սխալ է լրացված արտադրողի անվանումը: Բնութագիրը արտագրված է պատվիրատուի բնութագրից, այն ինչ մասնակիցը ինքը պետք է բնութագրի իր կողմից առաջարկվող ապրանքը. մասնավորապես՝ գույնը, շարժիչի հզորությունը, առավելագույն զանգվածը, գազի բալոնների քանակը, դրանց փորձարկման թղթերի առկայությունը, թափքի չափերը, տեղեկատվություն մեքենայի և մարտկոցի սարքինության վերաբերյալ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2024 թվականի ապրիլի 10-ին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/14 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.11 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 25/04/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ _____ **Ս. ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ**

ստորագրություն